«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Հավելված**
**«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և**
**սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի**
**Գիտական խորհրդի**
**2023թվականի փետրվարի 28 թիվ 30-Լ որոշում**

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԲԱԺԻՆ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրային կապերի և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտը սպասարկող ՓիԱր քաղաքականությունը ՀՖԿՍՊԻ զարգացման ռազմավարական կարևոր ուղղություններից մեկն է և ամրագրված է ՀՖԿՍՊԻ 2022-2026 թթ. ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթներով:

Հանրային կապերի և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտը մեկ ընդհանուր, ամբողջական հաղորդակցական համակարգ է, որի նպատակն է առավելագույնս նպաստել ՀՖԿՍՊԻ՝ որպես բացառիկ բուհի, դրական իմիջի ձևավորմանը, հեղինակության բարձրացմանը, բուհի առաքելության և գործունեության համար նպաստավոր հաղորդակցական միջավայրի ապահովմանը, առաքելության և գործունեության ուղղությունների, նպատակների և ծառայությունների վերաբերյալ հանրային իրազեկմանը, գիտահետազոտական, կրթական և սպորտային ոլորտներում առաջատար դիրքի ապահովմանը և ամրապնդմանը:

Փաստաթուղթը կոչված է նախանշել հանրային կապերի և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում իրականացվող աշխատանքների տեսլականը, սահմանել, նախանշել հանրային կապերի և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում գործունեության վերաբերող սկզբունքային մոտեցումներն ու աշխատանքային գերակա նպատակներն ու ուղղությունները, ինչպես նաև հստակեցնել հանրային կապերի և

կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում գործունեության իրականացման համար պատասխանատուների շրջանակը:

## ԲԱԺԻՆ 2. ՆՊԱՏԱԿԸ

1. ՀՖԿՍՊԻ հանրային կապերի և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության նպատակն է՝
    1) հստակեցնել և ամրագրել ՀՖԿՍՊԻ հանրային կապերի և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գերակա ռազմավարական ուղղությունները՝ ապահովելով իրականացվող ծրագրերի և միջոցառումների հայեցակարգային հենքը,
    2) ներկայացնել հաղորդակցման մարտավարությունները, քայլերի հերթականությունը, ընթացակարգերն ու առկա ռեսուրսները,
    3) առանձնացնել և դասակարգել բուհի համար հիմնական թիրախային լսարանները,
    4) առանձնացնել և հստակեցնել հանրային հաղորդակցության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գործունեության կառավարման պատասխանատուների շրջանակը և գործառույթները,
    5) որոշել աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ձևաչափը, ներկայացման ընթացակարգը, պարբերականությունը:

## ԲԱԺԻՆ 3. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՖԿՍՊԻ հանրային կապերի և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականությամբ սահմանված առաքելությունն է՝
    1) ստեղծել ՀՖԿՍՊԻ–ի՝ որպես գիտակրթական հաստատության, առաքելության և գործունեությանը նպաստող հաղորդակցական միջավայր,
    2) ապահովել գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը,
    3) հանրության լայն շրջանակների համար հասանելի դարձնել բուհի առաքելության, նպատակների, ծրագրերի և գործունեության վերաբերյալ մշտապես թարմացվող տեղեկատվական հարթակները,

4) ապահովել համապատասխան լսարաններին հասցեագրված նպատակային հաղորդագրությունների թիրախավորված առաքումը,
5) ՀՖԿՍՊԻ գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման գործիքների բազմազանեցումը,
6) տեղեկատվական հարթակների ստեղծումը և կառավարումը,
7) մեդիահարաբերությունների ձևավորման միջոցով ՀՖԿՍՊԻ առաքելության, նպատակների և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածումը:

## ԲԱԺԻՆ 4. ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ՀՖԿՍՊԻ հանրային կապերի և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության խնդիրներն են՝
   1) Բուհի դրական իմիջի ձևավորումը, հեղինակության բարձրացումը և ամրապնդումը, ինչպես նաև ներկայացումը հասարակության տարբեր խմբերին
   2) որպես կրթական, գիտական, սպորտի և հարակից ոլորտները սպասարկող առաջատար կառույց
   3) խորհրդանշական (լոգո, շենք, ներկայացուցչական անձինք )ճանաչելիության ապահովում տարբեր լսարանների շրջանում
   4) ԶԼՄ-ների հետ համագործակցության համատեքստում՝ բուհի դրական կերպարի ձևավորում և գործունեության վերաբերյալ նպաստավոր լուսաբանում
   5) դրական իմիջի ձևավորմանը և հեղինակության բարձրացմանն ուղղված հանրային միջոցառումների (ԿՍՊ ծրագրեր, բարեգործական ակցիաներ և այլն) իրականացում

## ԲԱԺԻՆ 5. ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀՖԿՍՊԻ տարբեր ստորաբաժանումների ծրագրերի, միջոցառումների և նախագծերի «PR» սատարումը:
   1) Միջոցառումների, նախագծերի «PR» աջակցությունն ուղղված է ՀՖԿՍՊԻ–ում իրականացվող կրթական ծրագրերի ներկայացմանը, հանրային նշանակության

միջոցառումների լուսաբանմանը, դրանց վերաբերյալ տեղեկատվության տարածման մակարդակի բարձրացմանը:

2) Քաղաքականության առանցքային ուղղություններից է ՀՖԿՍՊԻ ստորաբաժանումների և արտաքին թիրախային լսարանների միջև կապի ապահովումը և համակարգված աշխատանքների կազմակերպումը:

2. ՀՖԿՍՊԻ և հասարակության տարբեր խմբերի միջև հաղորդակցային երկկողմանի համակարգի ձևավորումը՝

1) Հետադարձ կապի ապահովման նպատակով ՀՖԿՍՊԻ ներկայացուցիչների և տարբեր թիրախային խմբերի համատեղ մասնակցությամբ պարբերաբար իրականացվում են թեմատիկ հանդիպումներ, հատուկ միջոցառումներ, քննարկումներ, կլոր սեղաններ և այլն:

2) Հետկապի արդյունավետության բարձրացման նպատակով պարբերաբար իրականացվում են ՀՖԿՍՊԻ գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություններ, գնահատումներ և վերլուծություններ:

## ԲԱԺԻՆ 6. ԴԻՐՔԱՅՆԱՑՈՒՄԸ

**1.** ՀՖԿՍՊԻ հանրային կապերի քաղաքականությունն ուղղված է ՀՖԿՍՊԻ դիրքայնության ապահովմանը՝ որպես որակյալ ծառայություններ մատուցող մրցունակ, առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություն ինչպես ՀՀ-ում, այնպես էլ միջազգային կրթական ծառայությունների շուկայում:

**2.** ՀՖԿՍՊԻ կողմից մատուցվող կրթական ինչպես նաև այլ բնույթի ծառայությունների ներկայացում միջազգային կրթական շուկայում, այդ ծառայություններից օգտվողների թվի ավելացում, միջազգային կրթական և սպորտային կազմակերպությունների հետ մշտական կայուն համագործակցության ապահովում:

## ԲԱԺԻՆ 7. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄ

1) ՀՖԿՍՊԻ հանրային կապերի և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գործունեության շրջանակներում սահմանվում են հետևյալ թիրախային ուղղությունները՝ արտաքին խորհրդակցությունների ապահովում

ՀՖԿՍՊԻ դրական իմիջի ձևավորմանը և հեղինակության բարձրացմանը նպաստող միջոցառումների համատեքստում.

1) բուհի գիտահետազոտական ներուժի, համապատասխան նվաճումների և ձեռքբերումների մասին հանրամատչելի տեղեկատվության տարածում,
2) բուհում իրականացվող կրթական բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկում,
3) ուսանողական արտալսարանային և սպորտային կյանքի վերաբերյալ հանրային իրազեկում,
4) բուհի միջազգային համագործակցության և սփյուռքի հետ աշխատանքների ներկայացում, լուսաբանում,
5) բուհի և այլ (պետական, մասնավոր, առևտրային և ոչ առևտրային) կազմակերպությունների հետ համագործակցության ամրապնդում և զարգացում:

1) ՀՖԿՍՊԻ ներբուհական (կորպորատիվ) համագործակցային հարաբերությունների և միասնական գործունեության ապահովմանն ուղղված աշխատանքներ:
2) ներքին հաղորդակցության քաղաքականության մշակում՝ ուղղված աշխատակիցների և ուսանողների համախմբմանը և տարաբնույթ միջոցառումներին նրանց մասնակցության ապահովմանը,
3) տեղեկատվության տարածման մեխանիզմների կատարելագործում,
4) ներբուհական (կորպորատիվ) պատասխանատվության մշակույթի, ավանդույթների ձևավորում, ամրապնդում, զարգացում,
5) բուհի աշխատակիցներին և ուսանողներին՝ բուհի կառուցվածքի, ֆակուլտետների, կենտրոնների, այլ ստորաբաժանումների գործունեության, ինչպես նաև բուհում տեղի ունեցող միջոցառումների և իրադարձությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում,
6) կորպորատիվ համերաշխության՝ «բուհի կարևոր մաս–բաղադրիչը լինելու» գիտակցությունն ամրապնդելու ուղղությամբ միջոցառումների իրականացում, աշխատակիցների, ուսանողների և շրջանավարտների շրջանում նոր ավանդույթների ձևավորում,

7) ներքին հաղորդակցությունների միջոցով բուհին վերաբերվող առանցքային հիմնախնդիրների վերաբերյալ ներբուհական համակարգված միասնական մոտեցման ձևավորում,
8) մասնագիտական և գործնական աջակցություն տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվող հանրային նշանակություն ունեցող միջոցառումների պատշաճ կազմակերպման գործում՝ պլանավորում, պատասխանատուների գործառույթի հստակեցում/տարանջատում, արարողակարգի կազմում, վերջնարդյունքի գնահատում, հետադարձ կապ,
9) ներքին հաշվետվողականության և պատասխանատվության մակարդակի բարձրացում:

3. ԶԼՄ-ների հետ արդյունավետ համագործակցություն
    1) բուհի հետ համագործակցող հայաստանյան լրատվամիջոցների թվի ավելացում,
    2) հայկական լրատվամիջոցների և տեղեկատվական հարթակների հետ համագործակցության փաստաթղթավորում,
    3) բուհի և ՀՖԿՍՊԻ առանձին ստորաբաժանումների, բուհի աշխատակիցների գործունեության վերաբերյալ ԶԼՄ-ների միջոցով լուսաբանումների թվի ավելացում,
    4) կրթության, գիտության և սպորտի ոլորտը լուսաբանող լրագրողների հետ տեղեկատվական առիթների ստեղծում, բազմազանեցում,
    5) ՀՖԿՍՊԻ պաշտոնական կայքի՝ որպես բուհի սեփական տեղեկատվական հարթակի ակտիվացում և դինամիկ զարգացման ապահովում,
    6) սոցիալական ցանցերում բուհի ներկայացվածության ակտիվացում,
    7) ԶԼՄ-ներում բուհի վերաբերյալ հրապարակված նյութերի մշտադիտարկում,
    8) գիտակրթական գործընթացների սպորտի և հարակից ոլորտների վերաբերյալ մամուլի ասուլիսների կազմակերպում,
    9) ՀՖԿՍՊԻ մասնագիտական/փորձագիտական կարծիքի և դիրքորոշման շրջանառում՝ հասարակական հաղորդակցություններում:

4. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն
    1) ակտիվ ներգրավվածություն հանրային միջոցառումներում, համազգային ծրագրերում և համազգային նախաձեռնություններում,

2) հասարակական և սպորտային միջոցառումներում, նախագծերում և ծրագրերում բուհի ներգրավվածության մակարդակի բարձրացում,
3) կազմակերպվող ծրագրերի շրջանակներում սոցիալական գովազդների պատրաստում և տարածում,
4) համապետական միջոցառումներում, բարեգործական և հովանավորչական նախագծերում բուհի մասնակցության ապահովում և նախաձեռնողականության ցուցաբերում,
5) ՀՖԿՍՊԻ կողմից սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացում, սոցիալական պատասխանատվության ռազմավարության հստակեցում:

5. Հանրային կարծիքի ուսումնասիրություններ

1) հանրային նշանակության հետազոտական դաշտի ուրվագծում, հստակեցում, ընդլայնում, մշտադիտարկման համակարգի ներդրում,
2) հանրային կապերի ոլորտում տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների մշտադիտարկում,
3) ներբուհական (կորպորատիվ) տիրույթում կարծիքների հավաքագրում, ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացում,
4) «PR» և մարքետինգային արշավների արդյունավետության գնահատման գործիքների (չափանիշների, ցուցիչների) մշակում և կիրառում:

## ԲԱԺԻՆ 8. ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐ

1. ՀՖԿՍՊԻ հանրային հաղորդակցությունների և մարքեթինգային գործողությունների հիմնական թիրախային լսարաններն են՝
   1) ավագ դպրոցների աշակերտները, այլ տարիների շրջանավարտները, դիմորդները և ծնողները,
   2) ուսանողները և շրջանավարտները

3) ՀՖԿՍՊԻ աշխատակիցները (պրոֆեսորադասախոսական, վարչական և տեխնիկական սպասարկման անձնակազմ),
4) գիտական և կրթական հանրույթը,
5) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի ներկայացուցիչները,
6) մարզաձևերի ազգային ֆեդերացիաները, ակումբները և հետազոտական կենտրոնները,
7) մասնագիտական միավորումները,
8) գործարար կառույցների, պետական և առևտրային մարմինների ներկայացուցիչները,
9) հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները,
10) ԶԼՄ-ները և սոցիալական հարթակները: